ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հռիփսիմե Գրիգորյանի 2018 թվականի հունիսի 23-ից մինչև հուլիսի 3-ը ԱՄՆ (ք. Բոստոն, Նյու Յորք և Վաշինգտոն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. Անուն, ազգանունը՝

Հռիփսիմե Գրիգորյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ԱՄՆ (ք. Բոստոն, Նյու Յորք և Վաշինգտոն), *2018 թվականի հունիսի 23-ից մինչև հուլիսի 3-ը:*

4. Գործուղման նպատակը՝

Մասնակցել եմ «Իմ Հայաստան» (My Armenia Program) ծրագրի շրջանակներում ԱՄՆ-ում (Վաշինգտոն, Նյու Յորք, Բոստոն քաղաքներ) կազմակերպված հայկական ու ամերիկյան զբոսաշրջային ոլորտի մասնավոր ընկերությունների B2B և ճամփորդական լրատվամիջոցների հետ հանդիպումներին, ինչպես նաև Smithsonian Folklife փառատոնին՝ ներկայացնելով Հայաստանը որպես ապահով և գրավիչ զբոսաշրջային ուղղություն:

ՀՀ Կառավարության կողմից քառասունութ միլիոն դրամ պետական աջակցություն է ցուցաբերվել Smithsonian Folklife փառատոնի կազմակերպչական աշխատանքներ

կատարելու նպատակով: Միջոցառմանը Հայաստանի Հանրապետությունը մասնակցություն է ապահովել հատուկ հրավիրյալի կարգավիճակով: «Ֆոլքլայֆ» փառատոնում Հայաստանը ներկայացվել է «Հայաստան. արարելով տուն» գաղափարի ներքո:

Մասնակցությունը միջոցառմանը Հայաստանին հնարավորություն է ընձեռնել օգտագործել նշյալ հարթակը ոչ միայն զբոսաշրջային գրավչության և մշակութային ժառանգության ներկայացման, այլ նաև հայկական արտադրանքը՝ շուկայի տարածքում, լայնամասշտաբ լսարանի առջև գովազդելու համար:
Այցելուներին ներկայացվել են հայկական խոհանոցի և ձեռագործ արվեստի մշակութային ժառանգության վերափոխված այն արժեքները, որոնք համայնքի ձևավորման, զարգացման և տնտեսական կայունության հենքն են հանդիսանում: Փառատոնի անցկացման շուրջ կեսդարյա արդյունքները վկայում են, որ «Ֆոլքլայֆ» փառատոնը ոչ միայն խթանում է զբոսաշրջությունը դեպի ներկայացվող երկիր, այլև նպաստում է մասնակիցների մշակութային ժառանգության նորովի ներկայացմանը՝ ռեբրենդինգին, ինչպես նաև ազգային արժեքների տարածմանը:

5. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- ԱՄՆ այցելության առաջին երկու աշխատանքային օրերին՝ հունիսի 25-ին՝ Բոստոնում և 26-ին՝ Նյու Յորքում կայացել են հանդիպում-քննարկումներ ամերիկյան զբոսաշրջային օպերատորների և զբոսաշրջային ոլորտի մասնավոր ընկերությունների հետ (B2B ֆորմատի), ինպես նաև տեղի են ունեցել հանդիպումներ ճամփորդական լրատվամիջոցների հետ:
- 2018 թվականի հունիսի 27-ին և 28-ին տեղի են ունեցել Smithsonian Folklife փառատոնի պաշտոնական բացման արարողությունները:
- 2018 թ. հունիսի 28-ից շարունակվել են ԱՄՆ զբոսաշրջային ինդուստրիայի ներկայացուցիչների հետ հանդիպումները, որտեղ Կոմիտեի նախագահը հանդես է եկել Նոր Հայաստանի՝ որպես ապահով և գրավիչ զբոսաշրջային ուղղության ներկայացմամբ:

- Տեղի են ունեցել հանդիպումներ ԱՄՆ-ում սփյուռքի խոշոր կազմակերպությունների՝ «Հայ դատի» հանձնախմբի, Ամերիկայի հայկական համագումարի գրասենյակների, հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են համագործակցության հնարավոր տարբերակները՝ Հայաստանը՝ որպես զբոսաշրջային ուղղություն ԱՄՆ շուկայում ներկայացնելու և խթանելու ուղղությամբ:
- Հարցազրույցներ են տրվել Voice of America - VOA, Առաջին ալիք և The Armenian Mirror-Spectator լրատվամիջոցներին:

6. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԱՄՆ այցելության առաջին երկու աշխատանքային օրերին՝ հունիսի 25-ին՝ Բոստոնում և 26-ին՝ Նյու Յորքում կայացած միջոցառումների ընթացքում ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների արդյունքները հետևյալն են.

- ԱՄՆ-ում Հայաստանի զբոսաշրջային գրասենյակի հիմնում,
- Բոստոնից ԱՄՆ տուրօպերատորների խմբի ճանաչողական այց Հայաստան՝ Մարիոթ հյուրանոցի հետ համագործակցությամբ,
- Անդամակցություն ԱՄՆ տուրօպերատորների ասոցիացիային (USTOA),
- Ֆլետչեր դպրոցի շրջանավարտների հավաքներ և շրջագայություններ Հայաստանում,
- ՄԱԿ-ի աշխատակիցների համար կորպորատիվ շրջագայություններ Հայաստանում,
- Հայաստանի զբոսաշրջային արդյունքների ներառում Մետաքսի ճանապարհով անցնող երթուղիների փաթեթներում,

- Հայաստանի զբոսաշրջային արդյունքների ներառում Panorama Travel-ի շրջագայություններում և որպես առաձին ուղղություն՝ Վրաստանի հետ համատեղ տարածաշրջանային փաթեթներում,
- Չինական շուկայում Հայաստանի դիրքավորման և հայկական զբոսաշրջային արդյունքների առաջխաղացման համապարփակ ծրագրի ուղղությամբ համագործակցության մեկնարկ չինական հսկա զբոսաշրջային կազմակերպության հետ (300 միլիոն հաճախորդ),

Վաշինգտոնյան այցի ընթացքում հունիսի 27-ից մինչև հուլիսի 2-ը ձեռք են բերվել հետևյալ պայմանավորվածությունները.

- Հայաստանի ընդգրկումը ԱՄՆ զբոսաշրջային օպերատորների փաթեթներում,
- Հայաստանի մասին մարքեթինգային նյութերի տեղադրում ԱՄՆ տեղական ավիաուղու օդանավերում (անհատույց),
- Հայաստանի զբոսաշրջային թվային բովանդակության տարածում ԱՄՆ հայկական կազմակերպությունների թվային հարթակներում,
- ԱՄՆից Հայաստան կրոնական զբոսաշրջության կազմակերպում՝ համագործակցելով տեղի եկեղեցիների հետ (այդ թվում՝ հայտնի սննդի փառատոններին հայկական զբոսաշրջային գրավչությունների մարքեթինգային նյութերի տարածում՝ անհատույց),
- ԱՄՆ մի շարք կաբելային հեռուստատեսություններում Հայաստանի վերաբերյալ տեսանյութերի հեռարձակում (անհատույց),
- Այսպիսով, ընդհանուր առմամբ զբոսաշրջային ոլորտի ավելի քան 70 կազմակերպություններ և ավելի քան 40 լրատվամիջոցներ այս օրերին հնարավորություն ունեցան ընդգրկուն պատկերացում կազմելու Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների մասին՝ երեք խոշորագույն քաղաքներում

յուրաքանչյուր օր 7-9 ժամ տևած միջոցառումներին: Իսկ Փառատոնի շնորհիվ, ևս հարյուր հազարավոր տեղացիներ և զբոսաշրջիկներ ծանոթացան հայ մշակույթին՝ Հայաստանի ամեն անկյունից ժամանած ազգագրագետների, արվեստագետների և արհեստագործների միջոցով:

7. Գործուղվողը՝

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահ:

Հռիփսիմե Գրիգորյան

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

26 հուլիսի, 2018թ.:

Հ. Գրիգորյան